ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՃԻՇՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԿՈՏՈԼԿՅԱՆ ԹԱՄԱՐԱ
Գավառի պետական համալսարանի դասախոս
էլփոստ՝ kotolkyan.toma@mail.ru
ՀԵՐԳՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ
Հոգեբան
էլփոստ՝ shushanmariamhergnyan@mail.ru

Այս հոդվածում ներկայացվել է, թե մեծահասակներն ինչպիսի դիրքորոշում պետք է ցուցաբերեն, որ կրտսեր տարիքի երեխաները, անցում կատարելով բարձր դասարաններ, դրսևորեն հետաքրքրություն կերպարվեստի նկատմամբ և շարունակեն նկարել:

Բանալի բառեր՝ *երեխա, մեծահասակ, նկարել, ստեղծագործություն, արտ թերապիա:*

Արդի ժամանակաշրջանում ավելի ու ավելի է կարևորվում գեղագիտական դաստիարակության ու գեղարվեստական կրթության տեղն ու դերը: Երեխաների գեղարվեստական գործունեությունը անձի համակողմանի, ներդաշնակ և սոցիալ-հոգեբանական զարգացման ուղին է: Գեղարվեստական գործունեությունն էլ իր հերթին ձևավավորվում է գեղարվեստական մտածողության հենքի վրա, և վերջինս հանդես է գալիս, ինչպես նշում է Նեմենսկին, երեք ոլորտով կամ ձևով՝ նկարել, ծեփել և ձևավորել, որոնք երեխաներին գործնականորեն հայտնի են դպրոց հաճախելուց դեռ շատ առաջ: Երբ երեխաները զբաղվում են այդ երեք ոլորտով, չեն գիտակցում, որ դրանք գեղարվեստական գործունեության ձևեր են: Ինչպես խաղը, խաղային գործունեությունն է շատ կարևոր երեխայի զարգացման գործում, այնպես էլ գեղարվեստական գործունեությունը, որը շատ վաղ տարիքում շաղկապված է խաղային գործունեության հետ: Խաղերի ժամանակ երեխաները միշտ ինչ-որ բան են կառուցում. դրանք կարող են լինել տներ, ամրոցներ, որոնք ավազից են, խորանարդիկներից և այլն: Յուրաքանչյուր երեխա

ինչ-որ բան է նկարում թղթի, պատի, ասֆալտի, ձյան և նույնիսկ ձեռքերի վրա: Նշենք, որ վերջինս երեխաների ամենասիրած զբաղմունքն է:

Ամեն երեխա խաղային գործունեության ընթացքում որոշակիորեն ձևավորում է իրեն, իր անկյունը, ավազից պատրաստված ‹‹թխվածքները›› և այլն: Այս բոլորից էլ սկիզբ են առնում վերը նշված գեղարվեստական գործունեության երեք տեսակները՝ նկարելը, ծեփելը և դեկորատիվ ձևավորումը: Բայց ներկայացրած երեք ձևերից ամենասկզբնականը, ամենասիրելին և ամենաէականը երեխաների համար եղել և մնում է նկարչությունը: Փոքրիկն աշխարհը յուրացնում է գծեր քաշելով, խզբզոցով, հետագայում էլ սյուժետային նկարներ նկարելով:

Երեխաների առաջին աշխատանքներն անվանում են ‹‹խզբզոցներ›› («марания», «каляки», «каракули»): Երեխան այդ գծերի միջոցով արտահայտում է իր հույզերը և աշխարհընկալումը:

Երկուսից չորս տարեկանում երեխան փորձում է հստակ պատկերներ նկարել: Ավելի ուշ, կախված ձեռք բերած փորձից, երեխան սկսում է նպատակային պատկերներ ստեղծել և պատմություններ հորինել այդ պատկերների շուրջ:

Մեկ տարեկանից մինչև տասը տարեկանը համարվում է մանկական նկարչության ‹‹ոսկե դարաշրջան››, որի նախապատրաստումը սկսվում է երկու տարեկանից: Երբ երեխան սկսում է նկարել պատկերներ, ապա դա դեռևս չի հանդիսանում արվեստի որևէ բնագավառում ապագա մասնագիտությանը տիրապետելու նախնական փուլ: Նա նկարում է նկարելու համար: Նրան չի էլ հետաքրքրում վերջնարդյունքը և պատկերվող իրական օբյեկտների նմանությունը: Սկզբից նրանք անսյուժե են, իսկ հետո ունենում են ոչ նման, բայց հստակ սյուժե, և երեխան կարողանում է շարադրել միտքը, թե ինչ է նկարել: Նրան գրավում է ստեղծագործելու գործընթացը: Նկարելը երեխայի համար զբաղմունք է, հաճույք, ինքնադրսևորում, աշխարհընկալման առաջին քայլեր: Այս բոլորը դրսևորվում են մինչև 4 տարեկանը, իսկ արդեն 4 տարեկանում երեխայի նկարները հանդիսանում են մի յուրօրինակ օրագիր, որն էլ դառնում է երեխային ճանաչելու և ընդունելու ճանապարհ: Երեխայի կողմից արտաքին ողջ աշխարհի յուրացումը, աշխարհաընկալումը սկսվում է երեքից չորս տարեկանում: Պետք է հիշել, որ ամեն երեխայի համար ամենակարևոր և գլխավոր օբյեկտը թղթի կենտրոնն է: Նրանք իրենց համար ամենասիրելի և ամենակարևոր մարդկանց նկարում են թղթի կենտ-

րոնում առավել խնամքով, մեծ չափերով և փորձում են մանրամասն նկարել և գեղեցկացնել:

‹‹Ամեն մի երեխա նկարիչ է. դժվարությունն այն է, որ մանկական տարիքից անցում կատարելիս նկարիչ էլ մնան››: Սրանք հայտնի նկարիչ Պ.Պիկասոյի խոսքերն են:

Հիմնականում երեխաները շարունակում են զբաղվել նկարչությամբ, սակայն քիչ չեն այն երեխաները, ովքեր կրտսեր տարիքից հետո չեն ցանկանում նկարել:

Շատ են պատճառները, որոնք ստիպում են երեխաներին թողնել իրենց համար այդքան հետաքրքիր գործունեությունը, սիրելի զբաղմունքը: Դրանցից ամենատարածվածը մեծահասակների և ծնողների դիտողություններն ու կողմնակի միջամտություններն են: Այդ մասին շատ պատկերավոր նկարագրվում է Անտուան դը Սենտ Էքզյուպերիի ‹‹Փոքրիկ իշխանը›› ստեղծագործության մեջ:

Գրքում նկարագրվում է, որ վեց տարեկան տղան կարդում է, թե ինչպես է վիշապօձը կուլ տալիս իր զոհին և փորձում է պատկերել փղին կուլ տված օձին: Նրա նկարածը վիշապօձի պատկերն էր, սակայն մեծահասակները նմանեցնում են գլխարկի: Տղան նկարել էր վիշապօձին նաև ներսից: Մեծահասակները խորհուրդ են տալիս տղային չզբաղվել հիմարությամբ ու անցնել մաթեմատիկա, աշխարհագրություն և ուղղագրություն սովորելուն: Տղան հրաժարվում է նկարչի փայլուն կարիերայից և ընտրում է ուրիշ մասնագիտություն:

Հնարավոր են նաև դեպքեր, երբ նկարելը դրսևորվում է որպես երեխայի զարգացման հաջորդական փուլ, և հետագայում երեխայի մոտ պասիվանում է հետաքրքրությունը նկարչության նկատմամբ: Բայց դա դեռ չի նշանակում, որ եթե երեխան պակաս հետաքրքրություն է ցուցաբերում երբեմնի շատ սիրելի գործընթացի հանդեպ, ապա իմաստ չունի շարունակել նկարել սովորեցնել: Ինչպես դպրոցում ուսուցանվող բոլոր հանրակրթական առարկաները, որոնք երեխաները սովորում են առանց նախապայմանի, այնպես էլ կերպարվեստը պետք է ուսուցանվի, այն էլ բարձր մակարդակով: Կա որոշակի սահման, որի տիրույթում անհրաժեշտ է ուսուցանել կերպարվեստը անկախ նրանից՝ երեխան օժտված է, թե ոչ, ցանկանում է նկարել, թե հակառակը: Հարկավոր է ուսուցանել նույնիսկ, եթե գերադասում է գործունեության այլ ձևեր: Երբ հարցը վերաբերում է հանրակրթական բոլոր առարկաներին, այն մտայնությունն է, որ նրանք պետք է ուսուցանվեն

(պատմություն, ֆիզիկա, քիմիա և այլն) և երբեք էլ հաշվի չի առնվում՝ արդյոք երեխան օժտված է բնագիտական կամ պատմական ընդունակություններով, թե ոչ: Իսկ կերպարվեստի դեպքում դեռ մանկուց կա այն դիրքորոշումը, որ պետք է երեխան օժտված լինի, ‹‹շնորհք ունենա››, որից հետո նոր միայն սովորի նկարել:

Հանրակրթական դպրոցում ‹‹Կերպարվեստ›› առարկայի խնդիրն ու նպատակը նկարիչ դարձնելը չէ, (ինչպես գրականության ուսուցման ընթացքում՝ բանաստեղծ, երաժշտություն առարկայի ժամանակ՝ կոմպոզիտոր կամ էլ պատմություն առարկայի ուսուցման ընթացքում՝ պատմաբան):

Կերպարվեստի՝ որպես հանրակրթական դպրոցում ուսուցանվող առարկայի խնդիրն ու նպատակը գեղագիտորեն դաստիարակված, գեղարվեստական կրթություն ստացած, ճանաչողական գործընթացներով զարգացած, բանիմաց, կրեատիվ մտածողություն ունեցող, որոշակի նկարչական հմտությունների տիրապետող անձի ձևավորումն է: Այն աշակերտներն էլ, ովքեր բնատուր օժտված են, ավելի կզարգացնեն իրենց նկարչական կարողություններն ու հմտություններն ուսուցման ընթացքում: Առարկայի կրթական նշանակությունը էլ ավելի է արժևորվում, երբ դիտարկում ենք նկարչությունը նաև որպես արտ թերապիայի ուղղություն: Նկարչաթերապիան եղել և մնում է հոգեբանական մի շարք խնդիրների լուծման միջոց:

Ցավոք, հանրակրթական դպրոցներում կերպարվեստը դեռ մնում է ստվերում, շարունակում է լինել որպես ոչ այնքան կարևոր առարկա: Արդյունքում ունենում ենք գիտակից, բայց մշակութային դաստիարակությունից զերծ հասարակություն:

Երեխայի ստեղծագործական գործընթացի վրա իր ազդեցությունն է թողնում ոչ միայն դպրոցը, այլև ընտանիքը: Երբ երեխան ստեղծագործական ընթացքի մեջ է, շատ ծնողներ հարկի և անհարկի միջամտում են երեխաների գործերին: Ծնողներին թվում է, թե իրենց միջամտությունները կերպարվեստի բնագավառում ավելի ճիշտ են, իրենք ավելի ռեալ ու գեղեցիկ են նկարում: Եթե ծնողը չգիտի, թե ինչպես ճիշտ օգնել երեխային, ապա գոնե չպետք է խանգարի նրան: Այստեղ կարող ենք նշել նաև, որ նույն կերպ են վարվում շատ ուսուցիչներ, ովքեր կարծում են, թե դպրոցում ամենահեշտ դասավանդվող առարկաներից մեկը կերպարվեստն է:

Մանկական ստեղծագործությունը պահանջում է լուրջ վերաբերմունք: Շատ կարևոր է մեծահասակի, ծնողի և ուսուցչի ճիշտ մոտեցումը երեխայի և նրա նկարած պատկերի նկատմամբ: Այս դեպքում կտրուկ տոն, սեփա-

կան որոշումների պարտադրում, առաջադրած նկարից արտանկարում, երեխայի մտահղացումների թերագնահատում, անհարկի միջամտություն, ծաղր, քննադատություն չպետք է լինի: Պետք չէ երեխային անընդհատ հիշեցնել, որ նման չի նկարում: Միգուցե նա նպատակ էլ չունի նման նկարելու, չէ՞ որ այդ տարիքում երեխան ամբողջությամբ ստեղծագործում է և արտահայտում իր ներաշխարհում եղածը: Ստեղծագործությունը ի հայտ է գալիս ամբարված հոգեկան ողջ նյութի և արտաքին տպավորությունների ազդեցության տակ: Նրանք պատկերում են թղթի վրա այն ամենը, ինչ զգում և նկատում են իրենց շուրջը: Նկարում արտացոլվում են բոլոր խնդիրները, որ առկա են երեխայի կյանքում: Երեխան նկարում է ինչպես առարկաների, կենդանիների և մարդկանց ձևը, գույնը և մարմնակազմությունը, այնպես էլ դեպի այդ բոլորի նկատմամբ տածած վերաբերմունքը:

Սովորելով ‹‹կարդալ›› մեր երեխաների նկարները՝ մենք կարող ենք հասկանալ, թե որտեղ և երբ ենք սխալվել նրա դաստիարակության մեջ, ինչ տրավմաներ են առկա, ինչ ներանձնային հոգեբանական և միջանձնային խնդիրներ ունի երեխան:

Հոգեբանները հաստատում են, որ երեխայի նկարը արվեստ չէ, այլ նրա խոսքն է: Նա ‹‹խոսում է›› իրերի, իրավիճակների մասին նկարների միջոցով, իսկ այդ տարիքում բանավոր և գրավոր խոսքը դեռևս աղքատ է և անկատար: Եթե կատարյալ էլ դառնա, միևնույն է, նա կարող է շարադրել, կեղծել, իսկ նկարելով ոչինչ չեն կարող թաքցնել:

Երեխան, երբ նկարում է, նրա նկարած նկարներից բացահայտ երևում է, թե ինչ կա թաքնված երեխայի հոգում, և մեծահասակները կարողանում են կռահել, թե ինչ է կատարվում փոքրիկի ներաշխարհում: Մանկական նկարները, ինչպես նշում է Ռ. Կոնեզնին, պրոյեկցիայի արտահայտված օրինակներ են: Ըստ նրա՝ այն երեխաները, որոնց հաճախ են ծեծում, հորը նկարում են երկար ձեռքերով կամ էլ ընդհանրապես առանց ձեռքերի: Մեր պրակտիկայից չորս տարեկան աղջնակը, ում մայրը տեղին-անտեղի բարկանում էր, բարձրաձայն կոպտում երեխային, մայրիկին նկարում էր բերանը բաց և մազերը ցցված: Այն հարցին, թե ինչու է աղջիկը մազերն այդպես ցցված նկարել, աղջիկը պատասխանեց, որ երբ մայրը բարկանում է, մազերը ‹‹բիզ-բիզ›› են կանգնում: Մեր դիտարկումները տարիներ առաջ ցույց տվեցին, որ մանկատանն ապրող երեխան շուն և այլ կենդանիներ նկարում էր միշտ շղթայված: Շատ հաճախ երեխաների օգտագործած արտահայտչամիջոցները զարմացնում են գեղարվեստական կերպարի ընտրությամբ և

վերապրման խորությամբ: Վիճաբանությունից հետո փոքրիկ Արսենը չէր կարողացել վրեժը լուծել տղայից, ում հետ որ վիճաբանություն էր տեղի ունեցել. նկարեց նրան ամբողջովին մերկ:

Մեկ այլ դեպքում, երբ հանձնարարեցինք նկարել ‹‹Ազատ թեմա››, Դավիթն առանց երկմտելու նկարեց հարսանեկան ավտոմեքենա, հարսին և փեսային, շատ մանրամասն զարդարեց ու գեղեցկացրեց հարսին: Այդ ժամանակահատվածում Դավթի հայրն ու մայրը բաժանված էին միմյանցից, և Դավիթը ապրում էր հայրիկի հետ: Այն հարցին, թե ովքեր են, և ում է նկարել, նա չպատասխանեց և տխուր նայեց հատակին: Արդեն պարզ էր երեխայի ցանկությունները, մղումը դեպի նախընտրելի թեման: Այստեղ կարևոր չէ, թե ինչքանով են մարդկային ֆիգուրները համընկնում մարմնակառուցողական օրենքներին, կարևորը, որ ուսուցիչները և ծնողները իմանան, թե ինչ հոգեվիճակում և իրավիճակում է գտվում երեխան:

Նկարներում թույլ տված համաչափությունների և օրենքների խախտումը հենց երեխաներն իրենք են կարողանում ճիշտ մեկնաբանել. Օրինակ՝ եթե ձմռան փաթիլների կողքին նկարում են թիթեռներ, նրանք այդ փաստը նշում են, որ չնայած ձյուն է գալիս, բայց թիթեռներն արդեն սատկելու են:

Երեխաների նկարների բովանդակությունը ցույց է տալիս, որ բացատրություններով և զրույցներով զուգակցվող դիտումները նպաստում են նրանց զգայական ըմբռնումների ու մտապատկերների խորության զարգացմանը, ամբողջականացմանը և բազմակողմանիացմանը: Այս ամենը առանց հաշվի առնելու շատ ուսուցիչներ և դաստիարակներ հաճախ վաղ տարիքում ակամա սահմանափակում են երեխայի ստեղծագործական ձիրքը, նրա համար կաղապարներ ստեղծում: Վերջիններս սովորեցնում են նկարել միայն ‹‹ճիշտ›› կամ ‹‹նման››: Սա էլ հանգեցնում է նրան, որ երեխաների մոտ առաջանում է ընկճվածություն, անվստահություն, նման կամ լավ ու գեղեցիկ չնկարելու վախ: Վաղ կրտսեր տարիքի երեխաների մոտ աչք-ձեռք–ուղեղ կապը անհրաժեշտ է աստիճանաբար զարգացնել: Նման նկարելու պահանջը, ‹‹սիրուն›› նկարելու պարտադրանքը հանգեցնում են նրան, որ երեխան դադարում է նույն ոգևորությամբ նկարել և տարրական դպրոցի վերջում երեխաների մոտ մարում է նկարելու ցանկությունը: Կարելի է երեխային ցուցադրել նկարելու ձևեր, ուղղել, շտկել, բայց նրա փոխարեն երբեք չնկարել: Ամբողջությամբ երեխայի փոխարեն նկարել ինչ-որ բան, նշանակում է նրա մեջ ինչ-որ բան անելու նկատմամբ վախ առաջացնել:

Շատ հաճախ տարրական դասարաններում ‹‹Հրաշք տետր››-ում երեխաների փոխարեն ծնողներն են նկարում, և երեխաները, համեմատելով նկարները, հրաժարվում են նկարելուց, քանի որ տեսնում են, որ իրենց նկարած նկարները որակով զիջում են մեծահասակների նկարած պատկերներին: Դպրոցներում դեռ դասավանդում են այնպիսի ուսուցիչներ, ովքեր ծնողի նկարած պատկերներն ավելի բարձր են գնահատում, իսկ երեխայի ինքնուրույն նկարածն ավելի ցածր, որը դարձյալ հանգեցնում է երեխայի ոգևորվածության անկմանը:

Շատ ծնողներ չափից շատ են շտապում երեխաներին վաղ ընդունել տալ նկարչական խմբակներ, քոլեջներ: Եթե քոլեջներում էլ մանկավարժն ու դաստիարակը թերի են տիրապետում տարիքային հոգեբանությանը և դասավանդման մեթոդիկային, փորձում են երեխային փոքր հասակում սովորեցնել ռեալիստական նկարչության հիմունքներ կամ տալիս են արտանկարել, արդյունքը կարող է հակառակը լինել, և երեխան դարձյալ հիասթափվի նկարելուց:

Դասընթացների ընթացքում արդյունքը ծնողը ցանկանում է տեսնել շատ արագ, անմիջապես: Նա ցանկանում է, որ երեխան իրականությունը դրոշմի այնպես, ինչպես կա: Բայց երեխայի մոտ արդյունքը տեսանելի է լինում երեխայի աշխարհընկալման զարգացմանը ուղիղ համեմատական: Նրա նկարած նկարները կրում են մանկական հոգու դրոշմը և չեն կարող լինել հասուն նկարներ: Մանկական նկարը մնում է մանկական նկար, իր արտահայտմամբ և առանձնահատկությամբ: Հասուն մարդու մոտ իրականությունը փոխարինվում է կայուն տեսողական ստերեոտիպով՝ երկինքը կապույտ գույնի է, կոկորդիլոսը՝ կանաչ, արևը՝ դեղին և այլն: Իսկ երեխաների մոտ այլ է, յուրաքանչյուր երեխա ունի իր սեփական կերպարների սուբյեկտիվ ասոցիատիվ կապերի աշխարհը: Եվ հենց այս ժամանակ էլ անհրաժեշտ է զարգացնել երեխաների ստեղծագործական ունակությունները, որոնք ավելի կարևոր են, քան շրջապատող աշխարհի իրականության դրոշմումը: Երեխային սովորեցնել նկարել այն յուրահատուկ եղանակներով, որոնց օգնությամբ երեխան կկարողանա իրատեսորեն նկարել շրջապատող աշխարհն այնքան էլ դժվար գործ չէ: Ա. Ա. Մելիք-Փաշաևը նշում է, որ եթե այն հայրը, ով կարողանում է նկարել սեղան՝ հեռանկարի կանոններով, կամ էլ կատու, որը նման չէ ոչխարի, չպետք է մտածի, թե այդ պատճառով ինքն ավելի մոտ է արվեստի էությանը, քան իր երեխան:

Հարկավոր է կատարյալ ազատություն տալ երեխային, քանի որ այն շատ կարևոր է վաղ հասակում, բայց մշտապես այն գերագնահատելը այնքան էլ ճիշտ չէ: Այն հետագայում կարիք ունի ուղղումների և մանկավարժական միջամտությունների: Ուսման մեջ կատարյալ ազատությունն անհնարին է: Հենց այստեղ է, որ անհրաժեշտ է մանկավարժի վարպետությունը և ճիշտ մոտեցումը երեխաների նկատմամբ: Հենց այստեղ է, որ ծնողը պետք է գիտակցի կերպարվեստի կարևորությունը և իմանա, որ նկարչական գործունեությունը հետագայում նպաստելու է երեխայի տրամաբանական մտածողության և զգայական կարողությունների զարգացմանը:

Այսպիսով, երեխայի նկարչական գործունեության զարգացումը, որն իրականանում է մեծահասակների նպատակաուղղված ներգործությամբ, պայմանավորված է երկու կարևոր գործոններով՝ երեխայի երևակայության և ստեղծագործական մտածողության զարգացմամբ: Նկարչական գործունեության նպատակադրված զարգացումը բերում է ցայտուն ձևով արտահայտվող դրական արդյունքների: Մեծահասակների ու ծնողների ճիշտ դիրքորոշումը դրական ներգործությամբ և հետևողական աշխատանքի շնորհիվ կզարգացնի երեխաների մտավոր, զգայական և գեղագիտական ընդունակությունները: Երեխաների մոտ վաղ տարիքից կձևավորվեն նկարչական գործունեության պարզագույն ձևեր, որն էլ կհանգեցնի այն մտքին, որ պարտադիր չէ լավ նկարել նոր սիրել գեղեցիկը և ունենալ գեղագիտական վերաբերմունք աշխարհի նկատմամբ: Իսկ երեխայի մեջ գեղագիտական վերաբերմունք և գեղարվեստական դաստիարակություն կարելի է իրականացնել շատ վաղ տարիքից: Այդ ամենը կարելի է սկսել տանը՝ շատ լուրջ վերաբերմունք ցուցաբերելով նրա գեղարվեստական գործունեությանը: Շատ կարևոր է գնահատել նրա մանկական աշխատանքները, ուշադրության կենտրոնում պահել նրա լավագույն ստեղծագործությունները, խրախուսել: Համատեղ ընտրել աշխատանքներ և փակցնել պատին: Ամեն առիթի դեպքում նվիրել տարբեր նկարչական պիտույքներ, ժամանակ առ ժամանակ փոխել գունավորման միջոցները: Երբեք չքննադատել և չծաղրել երեխայի առաջին քայլերը: Ամեն որպես չթելադրել նոր մտքեր, չափից շատ օգնություն չցուցաբերել: Թողնել, որ երեխան ինքը հասնի արդյունքի: Պետք է խրախուսել թեկուզ վատ, բայց երեխայի սեփական մտահղացումները: Փորձենք հեռու պահել արտանկարչությունից, որ զարգանա ինքնուրույն մտածողությունը: Եվ որ ամենակարևորն է, երեխաները շատ վաղ տարիքից հաճախեն թանգարաններ և պատկերասրահներ, որ տեսնեն և իրենց մեջ կրեն

գեղեցիկը: Ի վերջո, աշխարհն ընկալում ենք գեղեցիկ, երբ գեղեցիկը կրում ենք մեր հոգում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. դը Սենտ-Էքզյուպերի, «Փոքրիկ իշխանը», Երևան, «Արեգ», 2015:
2. Նեմենսկի, Բորիս Միխայլովիչ, Գեղեցկության իմաստությունը, 1987:
3. Николаева Е. И., Психология детского творчества ООО Издательство «Питер», 2016, Серия «Детскому психологу», 2016
4. Венгер А. Л., Психологические рисуночные тесты: Иллюстрированное руководство, М., Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2003, 160 с.
5. Копытин А. И., Практикум по арт - терапии, Питер, 2001.

THE RIGHT ATTITUDE OF ADULTS TOWARDS THE CREATIVE PROCESS OF CHILDREN

KOTOLKYAN TAMARA
Lecturer at Gavar State University
e-mail: kotolkyan.toma@mail.ru
HERGNYAN MARIAM
Psychologist
e-mail: shushanmariamhergnyan@mail.ru

In this article, we have presented the correct position of adults enabling the younger children to continue to paint and have an interest in visual arts when they move to higher grades.

Key words: Child, adult, draw, creativity, art therapy.

ПРАВИЛЬНОЕ ОТНОШЕНИЕ ВЗРОСЛЫХ К ТВОРЧЕСТВУ ДЕТЕЙ

КОТОЛКЯН ТАМАРА
Преподаватель Гаварского государственного университета
электронная почта: kotolkyan.toma@mail.ru
ЕРГНЯН МАРИАМ
Психолог
электронная почта: shushanmariamhergnyan@mail.ru

В этой статье мы представили правильную позицию взрослых, чтобы дети младшего возраста продолжали рисовать и проявляли интерес к изобразительному искусству, когда они переходят в старшие классы.

Ключевые слова: *ребенок, взрослый, рисовать, творчество, арт-терапия.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 23.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 22.09.2021թ.: